

բարեխաւսութեամբ սուրբ հայրապետին զհւրաքանչիւր աւգուտ յամենեցունց Տեառնէն ընդունին:

79 Իսկ երանելոյն զուգականին զայս լուեալ, զսուրբ վարդապետէն ասեմ զՄեսրոպբայ, տրտմեալ եւ տխրեալ լինէր, եւ յարտասուս եղեալ վարաներ զի ի նմանէ բաժանումն եւ զվախճան առնն Աստուծոյ, եւ զսպառումն զարմից սրբոյն Գրիգորի. եւ հոգաւք տարակուսեալ պաշարեր առ այնպիսի աղէտս, մանաւանդ զի ոչ տեսանէր զայնպիսի զոք առ ի բարեպաշտութեան ջանս եւ առ լուսաւոր վարդապետութիւնն եւ առ վերակացութեան շնորհն, որ եր ի վերոյ էր քան զամառնսն զհւր սուրբ հարսն: 80 Յայտոսիկ մտախոհ եղեալ ողբերգական բարբառով վարաներ. զի ոչ ոք ունէր համաշունչ՝ թէ ընտանեբար հոգասցէ վասն Հայաստանեաց եւ էլս այսոցիկ զԱստուած յիշէր եւ մխիթարէր ըստ Սաղմոսերգողին, որ արար զամենայն եւ փոփոխէ անհաս իմաստութեամբ եւ մատակարարութեամբ: 81 Եւ զինքն առաւել եւս յորդորէր ի կրանաւորութեան կարգս, համանգամայնիցն յաղթող լիեալ էր կրանաւորացս ըստ երկնային կոչմանն հանդիսանալ ի բարձրագոյնսն շնորհաւքն Աստուծոյ՝ առանց հեղձութեան: 82 Եւ յորդորէր զամենայն աշակերտեալսն առ բարեացն քաջութիւնսն, եւ յուշ առնէր ամենայն անձին զգուշանալ ամենայն անձին, ի վարս ի գնացս խոհեմագոյն եւ հանճարեղ իրատուք. մինչ բազմաց խիստ եւ ծանր եւ դժուար համարեալ զվարուցն կրթութիւնսն: 83 Այլ նա վերջինսն մոռանայր եւ յառաջադէմն նկատէր ծերունի հասական, զմտաւ ածելով զմաւտաւոր վախճանն՝ ոչ տայր քուն աչաց եւ ոչ նինջ արտեւանաց մինչեւ ցաւր կոչման ելանելոյ նորա յաշխարհէ:

84 Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իւր զհոգեւոր եռանդն բորբոքէր յաստուածսիրութիւն, եւ բազում թուղթս իրատուց ընդ ամենայն գաւառսն առաքէր, անդէն ի նմին ամի յետ վախճանի երանելոյն սրբոյն Սահակայ ի վեցերորդ ամսեանն ի տասն եւ յերիսն մեհեկանի՝ հասանէր վախճան սրբոյ վարդապետին հայոց, յԱյրարատ գաւառի ի Նոր քաղաքին, ի նոյն հոգեկիր կրանս, որպէս եւ յառաջագոյն ասացաք, հասանէր սրբոյն քրիստոսակոչ կատարումնն՝ յետ սակաւ ինչ աւուրց հիւանդութեան: 85 Եւ յորժամ կամեցաւ Աստուած որոշել զսուրբն ի մեջոյ ձեռնասուն աշակերտացն, եւ խառնել ի զունդս սրբոցն, թեթեւացեալ եւ սթափացեալ ի ցաւոցն, եւ կանգնեալ նստաւ ի ժողովոյն միջի, եւ համբարձեալ զձեռնս հանապազատարածս յերկինս, զամենասուրբ զԵրրորդութիւնն աւրինէր, եւ յանձն առնէր զաշակերտեալսն ամենապահ շնորհացն Աստուծոյ, զի կայսէն հաստատուն ի հաւատս եւ ի վարս ուղղութեան, եւ առանց գայթաղութեան կատարեսցնէ զարդարութիւն սուրբ հարց մերձաւորաց Քրիստոսի:

86 Եւ անուանք զլիաւոր աշակերտացն ժողովելոցն առ նա, են այս. առաջնումն Յովսէփ, եւ երկրորդումն Թողիկ, արք զգաստք եւ զգուշագոյնք.